

«ԱԶԳ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ՀԱՐԱԲԵՐԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ ԱՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐՅԱՆԻ ՊԱՏՄԱՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ռ. Ա. ՄԻՐՈՒՄՅԱՆ

Պատմափիլիսոփայական խնդրակարգի նկատմամբ 19-րդ դարի հայ մտածողների դրսևորած հետաքրքրությունը բացատրելի է դարաշրջանի յուրահատկությունով՝ հայ ժողովրդի կյանքում կատարվող արձատական տեղաշարժերով: Ազգային կեցության փոփոխվող պայմանների նկատմամբ նրանց շեղակցիան իր հիմքում ունենր որոշակի դիրքորոշում՝ ազգի գոյատևման և զարգացման ուղիների որոնման ու իմաստավորումը: Միաժամանակ անհրաժեշտ է ուշադրության ամենի մարդու և պատմականության խնդիրների նկատմամբ ճոր ժամանակաշրջանի եվրոպական փիլիսոփայության վերակողմնորոշումը: Այդ միտումն անդրադարձավ եվրոպական փիլիսոփայության ազդեցության ոլորտում գտնվող 19-րդ դարի հայ մտածողների և հատկապես Մտ. Նազարյանի փիլիսոփայական աշխարհայացքի ձևավորման վրա:

Մարդկային համակեցության բարձրագույն ձևը Մտ. Նազարյանը համարում է պետական կյանքը և այն համեմատում ազգի կազմավորման հետ: Ազգն էքնիկ ցեղերի միավորման արդյունք է, իսկ ազգային միության համար անհրաժեշտ է գտնում, որ արյունակցության վրա հիմնված զգացողությունը փոխարինվի գերազույն, համընդհանուր միության գիտակցությամբ: Այդ ընթացքը Մտ. Նազարյանը կապում է ազգային լեզվի ու ազգային մշակույթի և, ամենաարակ, մարդկային քաղաքակրթության առաջացման հետ: Նա հատկապես կարևորում է լեզվի դերը. «... յոթյ ազգի լեզու մտած է խօսի ոք, ի համարի ասի լինել նոքին իսկ ազգի, և լեզուն է՝ որ գատան է ազգ յազգէ, որպէս դարձեալ՝ նա է, որ կապակցէ զմարդիկ յազգ»¹: «Լեզուն է գլխավոր ցուցանիշը ազգային կրթութան, ինչքան հեռատարած է լեզուն, այնքան հեռատարած է ազգը, նորա սահմանը է ազգային սահմանք»²: Որոշակի աշխարհագրական և կլիմայական պայմանների դեպքում է հնաքավոր դառնում ցեղային միության գիտակցությունից ավելի բարձր խորհուրդ ունեցող ազգային միության գիտակցության ձևավորումը: Վերջինս ծնունդ է տալիս հայրենասիրության զգացմանը՝ բարոյական մեծ ուժի և ստեղծարար սկզբի, պետական գիտակցությանը: Ազգի ձևավորումը, այսպիսով, գուզընթաց է պետության ձևավորմանը: Ազգը սահմանվում է որպես «մի անըրժեքի բնական ամբողջություն հաստատ սահմանների մեջ, որ համեմատ է նորա տեղական տարածութեանը»³: Պետությունն իր հերթին պետք է լինի «օրինապատշաճ կազմառքած ամբողջություն, նա պիտի լինի համօրինությունը. բայց այս կախելությունը չպիտի լինի արտաքին, մի հարկադրանք, այլ մանաւանդ, ինչպես բնութեան մեջ, ազատական և զգալի հասարակություն օգուտները»⁴: Նա պետությունը համարում է հասարակական կեցության բարձրագույն ձևը, որտեղ անհատն ազատություն է տառնում, ընտանիքը բարեկեցիկ է դառնում, ցեղը վերածվում է ազգի, իսկ ազգը գոյության երաշխիք է ստանում:

Ըստ Մտ. Նազարյանի ազգը և պետությունը մեկ համակարգի՝ ազգ-պետության տարբեր կտրվածքներն են: Ազգն էքնիկական և տարածքային ընդհանրության վրա հիմնված մարդկանց միություն է, մինչդեռ պետությունը՝ այդ միության կարգավորման ընդհանրական բարոյական և իրավաբան-դաքական կողմը: Ուստի և պետության հավերժության մասին մտածողի գաղափարը պետք է ընդունել որպես ազգի հավերժության գաղափարի հաստատում: 19-րդ դարի եվրոպական հասարակագիտական-քաղաքագիտական ավանդույթի համաձայն, ազգի գաղափարը Մտ. Նազարյանը կապում է պե-

¹ Մտ. Նազարյան, Յաղագս փորձական հոգեբանության ճառ, Մոսկվա, 1851, Առաջաբան, էջ Բ:

² Մտ. Նազարյան, Քաղաքական ընկերութեան արձատական նիւթերը, «Հյուսիսփայտ», 1862, քիվ 4, էջ 175:

³ Նույն տեղում, էջ 177:

⁴ Նույն տեղում:

տության գաղտնիքի հետ, ընդ որում «ազգ-պետություն» համակարգի ստեղծման գործում նա նախապատվությունը տալիս է հոգևոր գործունեության (լեզու, մշակույթ):

Պետության հավերժության գաղափարը, սակայն, մտածողի կողմից դիտվում է որպես հնաքաղութային, որի իրականացման համար որոշակի պայմաններ է ենթադրում: Դրանք հնարավոր է բխեցնել «մարդկայնություն», «հայրենասիրություն», «աշխարհաքաղաքացիություն», «ազգայնություն» հասկացությունների մտածողի ըմբռնումից:

Պետության գոյության, գործության և անկախության երաշխիքը նա տեսնում է քաղաքացիների գիտակցության ընդհանրության և քարեկեցության մեջ, որոնք հայրենասիրության նախապայմաններն են: Նրա պատկերացմամբ հայրենասիրությունը քաղաքական մեծ առաքինություն է, ուստի օրենքից ավելի գորեղ է մարդկանց վրա գործած իր ազդեցությամբ: Վերջինիս դրսևորումներից մեկը քաղաքացիների՝ պետությանը հնազանդ լինելն է: Որպես միմյանց պայմանավորող երևույթներ, հայրենասիրությունը և ազգային գիտակցությունը սերտ կապի մեջ են դիտվում: Ազգային ինքնագիտակցությունը մտածողն ազգի բնական և պատմական հանգամանքների հետ անհատի կենդանի կապի արտահայտությունն է համարում: Առանց ազգային գիտակցության, ասում է նա, հայրենասիրությունը վերացական երևույթ է, լուրջ օրենքի հրամայական, իսկ առանց հայրենասիրության ազգային զգացումը, բայրյական խորհրդից զուրկ սրտի թուլություն է: Բանն այն է, որ հայրենասիրության, հետևաբար նաև ազգային ինքնագիտակցության առողջ արտահայտությունը նա կապում է որոշակի քաղաքական և իրավական նորմերի հետ: Այս կապակցությամբ նա գրում է. «Հարտահարության և ինքնահան կառավարության տակ կարող չէ քաղաքացին սրտի վկայութեամբ նույնացնել իր անձը քաղաքական (պետության-Ռ. Մ.) գոյութեան հետ, մինչ դեպի ազատության գաղղեցած անձնագրությունը յառաջ կամ յետոյ կը հնարաւոր է ազատ սահմանադրական ձևեր»:⁵ Թեև ժամանակակից աշխարհաշինության և խտության սերմերն ու ծիլերը Մտ. Նազարյանը Հին Ասիայի քաղաքակրթության արձանագրում է համարում, այնուամենայնիվ գտնում է, որ ասիական բուհակալության ազդեցության ներքո մարդկությունն այլանդակվել է: «Մարդս հարբտահարութեան և տառապանքի մէջ կորուսել է իր մարդկային արժանաւորութեան գիտակցութիւնը, հաւասարվել է հողի հետ. նա դարձել է մի անիրատունք բան, մի բշտառ խաղալիք անօրէն ու անկարգ իշխանութիւնների ձեռքում, մի անպաշտպան գոռ հոգով ու սրտով ցաւազարտած հրամայողների կամքի... թէ մարդս ծնած է ընկերութեան, իր ազգի կամ ժողովրդի համար, այդ գաղտնիքը ամենևին օտար է Ասիային մինչև այսօր իսկ, և Ասիայի դպրոցում ծնած ու սնած Հայերին...»⁶, ճշում է նա: Այս իսկ սրտաճառով բազմաթիվ պատերազմներում հայերի ցուցաբերած քաջությունը և արիական գործերը չեն օգնել նրանց իրենց հայրենիքի և ազգային պետականության պահպանման գործում. «... մասնատրների քաջութիւնը առանց միաբանութեան, առանց կամքերի, սրտերի և ձեռքերի միութեան, առանց մի ընդհանուր գաղափարի, որ պիտոյ է լիներ հայրենիքի պահպանութիւնը, ոչինչ կարողացել չէ, և կարող էս չէր յատաջացնել: Այս է ահա պատճառը, որ Հայոց ազգը արդարև եղած է մի քաջ ազգ, բայց համարեա թէ նոյնպէս միշտ թուլ, օտար իշխանութեան ստրուկ և հնազանդ ազգ, և աշխարհի կարող միշտ այնպէս է, որ մի մարդ կամ ժողովուրդ չկարողանալով իր բանականութեամբ կառավարել ինքը իր անձը, պիտոյ է հարկատրապէս հնազանդի օտարին: Ով չէ կարող լինել իր առաջնորդը, նա կարօտ է օտարի առաջնորդութեանը»:⁷ Պետականության բացակայությունը մեզանում Մտ. Նազարյանը բացատրում է նաև այլ հանգամանքներով՝ Հայաստանի աշխարհագրական դիրքով, հայերի և նրանց մերձավոր ժողովուրդների քաղաքակրթվածության մակարդակների տարբերությամբ: Նշված համատեքստում, սակայն, կարևորվում է այն, ինչ մտածողն անվանում է հայրենիքի պահպանության գաղափար և կամքերի, սրտերի և ձեռքերի միություն, այսինքն՝ ազգային հոգին:

Առողջ հայրենասիրության արտահայտման պայմանը կառավարման տահմանադրական ձևն է: Այն անհրաժեշտաբար ենթադրում է ընդդիմության առկայություն, ինչը, իր հերթին, աջակցում է հասարակական կարծիքի ձևավորմանը: Հասարակական կարծիքը բնութագրվում է որպես հասարակության վերաբերմունք կառավարման եղանակի և կառավարողների նկատմամբ: Այս տեսանկյունից պետության իդեալը մտածողն ամփոփում է այնպիսի մի պետության մեջ, որտեղ ամեն ինչ կառավարվում է ազգի անդամների ձեռքով և ամեն ինչ ծառայում է ազգի անդամներին: Ընդդիմությունը, սակայն, վտանգավոր է համարվում պետության գոյության համար, երբ ա) այն վերածվում է անձնական շահերից բխող

⁵ Մտ. Նազարյան, Քաղաքական ընկերութեան արմատական նիւթերը, էջ 178:

⁶ Մտ. Նազարյան, Առաջարկութիւն մի ընդհանուր հայկական ընկերութեան Ռուսաստանի մէջ, վստաքարեկարգելու հայերի նիւթական և բարոյական վիճակը, «Հյուսիսայրայր», 1862, թիվ 7, էջ 44:

⁷ Մտ. Նազարյան, Հայերի կոչումը մարդկութեան մէջ, «Հյուսիսայրայր», 1859, թիվ 1, էջ 4:

քանակներին, ք) պետությունը վտանգի առաջ է կանգնած: Վերջին դեպքում անհրաժեշտ է ազգի բոլոր ուժերը միավորել արտաքին բշտամու դեմ պայքարելու համար: Ստ. Նազարյանը գրեմուն է, որ պետական գործերի մեջ անհատների մասնակցությամբ է ապահովվում քաղաքական կյանքի հոգևոր-քաղաքական երաշխիքը: Տվյալ դեպքում նա նկատի ունի հասարակության քաղաքական հասունությունը, հասարակության ինքնազիշակության յուրաքանչյուր ձև հանդիսացող հասարակական կարծիքի՝ պետական կյանքի շարժառիթի մակարդակը:

Խոսելով առողջ հայրենասիրության դրսևորման համար անհրաժեշտ պայմանների մասին՝ Ստ. Նազարյանը, ըստ էության, բնութագրում է նոր ժամանակաշրջանի արևմտաեվրոպական պատմասիրիկ-սոցիալության մեջ (Ջ. Լոկ, Գ. Հյուն, Ա. Մինի և ուրիշներ) «քաղաքացիական հասարակություն» անվամբ հայտնի հասարակության նոր տարատեսակը, որի առաջացումը կապված էր ավատակարգի քայքայման և կապիտալիզմի ձևավորման հետ: Հայ մտածողի նշած կառավարման սահմանադրական ձևը, ընդդիմությունը և հասարակական կարծիքը քաղաքացիական հասարակության հիմնական հաստատություններն են:

Առողջ հայրենասիրության արտահայտման անհրաժեշտ պայմաններից է նաև ազգերի իրաշահավասարությունը, երբ չի իշխում «ուրիշ ազգերի նկատմամբ սեփական գերազանցութեան» զաղափարը: Ստ. Նազարյանի այս միտքը ուղղակիորեն առնչվում է «ազգայնություն» հասկացության իր մեկնաբանման հետ, իսկ վերջինս անմիջականորեն հարաբերակցվում է «մարդկայնություն» հասկացության իր ըրբման հետ: Ելնելով լուսավորչական փիլիսոփայությանը յուրահատուկ անձի և ազգի անհատականության հաստատումից՝ Ստ. Նազարյանը ազգայնությունը բնութագրում է որպես ազգի անհատականություն: Դրա առկայության և պահպանման անհրաժեշտությունը Ստ. Նազարյանը հիմնավորում է՝ ելնելով անձի անհատականության կարևորությունից: Անձի արժեքը սեփական կերպարի դրսևորման մեջ է, ինչ, իր հերթին, մարդկայնության հրամայականն է: Անհատն իրավունք չունի հրաժարվելու իր կենսական ուժը ներկայացնող անհատականությունից: Իսկ քանի որ ազգը պատկերացվում է անհատներից բաղկացած մի ամբողջություն, ուստի այն նույնպես իրավունք չունի կորցնելու իրեն կյանք տվող անհատականությունը: Ազգայնությունը ազգի դեմքն է, և նրա պահպանման անհրաժեշտության մեջ մեծ խորհուրդ է քաջնված: «Անգիտանալով և ճնշելով անհատականությունը, գրում է մտածողը, - իշխանութեան ճանապարհը քացվում է քանակաբար մեծ գորութեանը, բայց ազգային բնատրութեան ամբողջի մեջ գտնում է ամենախոք ազգը մի անցամաքելի աղբիւր քաջութեան և վերականգնութեան»: Այդ պատճառով էլ ազգայնության ուրացումն անձի իրավունքի ուրացում է նշանակում: Ստ. Նազարյանի կարծիքով ճշմարիտ մարդկայնությունը պահանջում է, որ մարդկանց բազմաբնույթ հակումներն ու ձգտումները մերդաշնակորեն լրացնեն միմյանց:

Ազգայնության խնդրի նազարյանական մեկնաբանման մեջ հնարավոր է առանձնացնել երկու կտրվածքներ՝ քաղաքական և մշակութաբանական: Քաղաքական տեսակետից, ազգայնության հաստատումը բարձրացնում է մարդ-քաղաքացուն մինչև մարդու աստիճան, իսկ ազգայնության ուրացումն իջեցնում է մարդուն մինչև ստրուկի աստիճան: Ժամանակակից աշխարհը մտածողն անվանում է ազատ անհատականության աշխարհ և դրա արտահայտությունը տեսնում նախ և առաջ անհատի կյանքի ազատության մեջ: Մարդը, սակայն, ոչ միայն քաղաքացի է, այլև բնավորության առանձնահատկություններով օժտրված էակ է, ասում է Ստ. Նազարյանը: Նրա տեսանկյունից ազգայնությունը չի խանգարում ոչ մարդկայնությանը, ոչ աշխարհաքաղաքացիությանը: Ընդհակառակը, ազգայնությունը հիմնընկում է առ փետ գաղափարների վրա: Մյուս կողմից՝ մարդկայնությունը և աշխարհաքաղաքացիությունն իրենց արտահայտությունը գտնում են ազգայնության մեջ: Սակայն ազգայնության բարձր խորհուրդը ընկալելու համար անհրաժեշտ է ընդունել բոլոր ազգերի ազատ ապրելու իրավունքը, ինչը ենթադրում է համաշխարհային հանդեսի վրա որևէ պետության գերիշխանության բացառումը: Ազգը, մտածողի պնդմամբ, հիմնված է ողջ մարդկության հետ իր կապի գիտակցման վրա: Ուստի «ազգային զգացումը» և աշխարհաքաղաքացիությունը նա պատկերացնում է որպես նույն երևույթների տարբեր կողմերը: Դա նշանակում է, որ ազգային իրավունքն իր լրացումն է գտնում միջազգային իրավունքի մեջ: Ազգն այն ժամանակ է միայն հասնում մարդկային և միջազգային իրավունքին, երբ բոլոր ազգերը փոխադարձաբար ընդունում են միմյանց: Գործնական աշխարհաքաղաքացիությունը ամփոփվում է մարդկայնության, այսինքն՝ ազգային պետության մեջ: Դրանից բխում է, որ մարդու կարգավիճակը պետության մեջ պետք է համապատասխանի նրա էությանը: Մարդու ձգտումները և հակումներն ազատ գաղափարաբանության իրականացումը պետք է ունենան:

¹ Ստ. Նազարյան, Քաղաքական ընկերութեան արմատական ճիւղեր, էջ 180:

Աշխարհը, եզրակացնում է Մտ. Նազարյանը, պիտք է պատկանի անհատին՝ ազգին և անձին: Գրա համար անհատի իրավունքը պետք է ընդունվի ողջ աշխարհում: Ազգի անհատականությունը և ազգերի միջև գոյություն ունեցող տարբերությունները պետք է ինքնուրույնաբար, քնականոն ճանապարհով ստեղծվեն՝ առանց որևէ օտար պետության միջնորդության: Ազգային զգացումը հնաբավոր չէ արթնացնել մարդու գիտակցության մեջ, եթե այն քնած չէ այնտեղ: Ազգայնությունը հնաբավոր չէ հնարել, քանզի այդ դեպքում ոչ մի արժեք չի ներկայացնի: Ազգայնությունը վեր է և ազատ ցանկացած օրենքի ազդեցությունից, ինչպես միտքը, այսինքն՝ ինչպես ամեն մի ներքին, հոգևոր երևույթ: Հենց այդ ներքին, հոգևոր սկզբունքով է որոշվում, ըստ Մտ. Նազարյանի, ազգերի ամաչելությունը պատմական հանդեսի վրա: «Ահա վեց հազար տարի է, որ աշխարհս կայ. այնքան դարեր ու ազգեր եկել ու գնացել են, շատ կամ փոքր գործ կատարելով մարդկութեան հրապարակի մեջ, ամեն մի՞նը լքուցանելով այն պաշտօնը, որ իմաստուն աշխարհանդեպը կարգել են նորա համար, ամեն մի՞նը ծառայելով մի գաղափարի և իրագործելով այդ գաղափարը իւր սնանատը, քաղաքական և իմացական կեանքի մէջ»,- գրում է նա:

Այս համատեքստում հարկ է նշել, որ ազգերի անհատականության (էթնիկական, լեզվական, մշակութային բազմազանության) խնդիրը հրատապ է նաև մեր օրերում: 80-ական թվականների կեսերից արևմտաեվրոպական փիլիսոփայության զարգացման նորագույն միտումն է՝ անցում ընդհատումների փիլիսոփայությունից «միասնական մարդկության» բազմակարծության հայեցակարգին: Այսօր հանրածանոթ «միասնական մարդկության» փիլիսոփայական նոր մոդելները հանգում են արժեաբանական սոցիալական քաղաքական դիրքորոշում ունեցող «խաղաղության էթոսին»: Այդ մոդելների հիմքում ընկած է սոցիալական կեցության, ժողովուրդների կողմից ինքնուրույնաբար ընտրված սոցիալական կարգի զանազանության գաղափարը: Կարելի է ասել, որ նշված մոդելների էությունը հանգում է մշակութային բազմազանության պահպանումից դեպի ազգային յուրօրինակության պահպանումը պարզիվմային, ի պաշտպանություն որի 19-րդ դարում հանդես էր գալիս հայ լուսավորիչ-մտածող Մտ. Նազարյանը:

Վերջաբար դրա իմաստը պարզապես խորհրդակցապես հետազոտողների (Հ. Գաբրիելյան, Ա. Խաչատրյան, Ռ. Կարապետյան) կողմից «իդեալիզմ» մեջ մեղադրվող Մտ. Նազարյանին, որը, ինչպես և դարաշրջանի այլ հայ մտածողներ, սոցիալական և քաղաքական խնդիրների լուծման գործում իր ուշադրությունը կենտրոնացնում էր դրանց արժեաբանական-քաղաքական տեսանկյունի վրա: Վերջինս հետազոտողներն այսօր համարում են այդ խնդիրների լուծման անհեռաեղանակական, ողջամիտ և ճիշտ տեսական-մեթոդաբանական նախադրյալը:

Ավանայտ է, որ քննարկվող խնդրի մշակութաբանական կտրվածքը անհրաժեշտ էր Մտ. Նազարյանին խնդրի իրավաքաղաքական կտրվածքի լրացման, այսինքն՝ ուրիշ ազգերի հետ հայ ժողովրդի իրավահավասար գոյության հաստատման համար, ժողովուրդ, որն անցել է քաղաքական պատմական ուղի, ստեղծել հարուստ նյութական և հոգևոր մշակույթ: Հայ ժողովրդի քաղաքականապես իրավահավասար գոյությունը մտածողը դիտում է որպես հեռանկար, մինչդեռ հայերի մշակութային իրավահավասարությունը, ըստ նրա, պետք է օգներ նրանց դիմանալու ինչպես Ռուսաստանի ուժացման քաղաքականությանը, այնպես էլ Թուրքիայի բռնակալությանը:

Այսօր իսկ, 20-րդ դարի վերջում, մշակույթների իրավահավասար փոխներգործությանն անցնելու միտում է նկատվում: Մշակույթների փոխներգործության ոլորտը քաղաքական հակասությունների բախման անենալարված կետերից մեկն է: Ն. Մուտրոշկովան այս կապակցությամբ նշում է. «Համաշխարհային մշակույթի որոնելի միությունը 20-րդ դարի վերջում իրականապես այնպիսի սոցիալ-պատմական դաշտ է ներկայացնում, որտեղ, ըստ էության, երկրների ու ժողովուրդների փոխլրացուցիչ պատմամշակութային տարբերությունները հանդես են գալիս հակասությունների ձևի տակ»⁹: Սա զրուցում է, որ միայն քաղաքական անկախության հասնելուց հետո է որևէ ժողովուրդ ձգտում հասնել նաև մշակութային անկախության: Մտ. Նազարյանը ժամանակին հակառակն է պնդել՝ մշակութային անկախությունը քաղաքական անկախության հիմքը, նախապայմանն ու գրավականն է, որն ունի ինչպես պատմական, այնպես էլ քաղաքական լուրջ հիմնավորում:

Մտ. Նազարյանն ընդդիմախոսում է այն տեսություններին, համաձայն որոնց հայրենասիրությունն արտահայտվում է ազգի մեկուսացման կամ նրա փառավոր անցյալի կորստի մեջ: Նա կողմ-

⁹ Մտ. Նազարյան, Հայերի կոչումը մարդկության մեջ, էջ 2:

¹⁰ Н. Мотрошилова, Новейшие тенденции развития западноевропейской философии. - Философия и культура. М., 1987 г., с. 244.

նակից է լուսավոր հայրենասիրությանը, որին ազգը հասնում է առաջադիմության ճանապարհին՝ հաղթահարելով բոլոր միջնադարյան ավանդույթները: Այն ազգը, որը չի ենթարկվում այս ընդհանուր ընթացքին, անխուսափելիորեն կործանվում է: Լուսավորության անհրաժեշտությունից Մտ. Նազարյանը բխեցնում է մարդկայնության խնդրի լուծման պահանջը: Այն ազգայնությունը, որը չի հարգում ազատության և արդարության գաղափարները, ինչպես նաև այն պետությունը, որը չի հիմնվում քաղաքացիների քաղաքական առաքինության (հայրենասիրության) և Ֆախանձախնդրության՝ ազգային ինքնագիտակցության վրա, չի կարող ընթանալ առաջադիմության ճանապարհով:

Մտ. Նազարյանը քննադատում է նաև «պատմական դաշտոցի»՝ ներկայացուցիչներին, ըստ որոնց ազգայնությունը խուսափում է լուսավորությունից, քանզի վերջինս վնասում է ազգին: Հայ մտածողը հակասություն չի տեսնում «ազգահարազատության», ազգային կյանքի և նոր ժամանակի առաջադիմության մեջ: Միև նույն ժամանակ ազգային միությունը պետք է բխի ներքին, հոգևոր պահանջմունքից, այլ ոչ քե ենթարկվի արտաքին գործոնների ճնշմանը, քանզի պարտականությունը պետք է լինի նաև անհատների իրավունքը: Դա ենթադրում է ազատության, հավասարության, մարդկային կերպարանավորման (առանց ատելության) ամկայությունը: Այդ ընթացքը, Մտ. Նազարյանի կարծիքով, չի հանգում սխալ հասկացած մարդկայնության դրսևորմանը՝ ազգային տահաններին և կապերի վերացմանը և համաշխարհային պետության ստեղծմանը, այլ պետք է ընդունվեն մարդկային բոլոր ստեղծագործությունները իրենց ազգային ձևի մեջ: Այդպես հասկացվող մարդկայնությունը փոխարինում է աշխարհաքաղաքացիության գաղափարին, քանզի, Մտ. Նազարյանի պնդմամբ, ավելի ճիշտ է արտահայտում գործի իրավիճակը:

Այսպիսով, «ազգայնություն», «հայրենասիրություն», «մարդկայնություն», «աշխարհաքաղաքացիություն» գաղափարները Մտ. Նազարյանը դիտում է որպես փոխկապակցված գաղափարներ: Ընդ որում, այդ գաղափարները կապող միջոցը «մարդկայնություն» գաղափարն է, մնացած գաղափարները «մարդկայնություն» գաղափարի տարբեր շերտերն են: Այդպես ընկալվող մարդկայնության իրականացումը հնարավոր է միայն ազգային պետության մեջ, որը բնութագրվում է որպես բարձրագույն և հավերժական բարոյական արժեք, մարդկային իմացականության ամենաբարձր ձևը¹¹: Պետությունը, սակայն, համապատասխանում է իր վսեմ խորհրդին այն դեպքում միայն, երբ նրա մեջ հաստատվում է արդարության սկզբունքը: Վերջինիս իրականացման պայմանը, իր հերթին, ազատության սկզբունքն է, որի վրա խարսխված է իրավունքի ողջ համակարգը: Մտ. Նազարյանը, յայսպիսով, քաղաքական ազատությունը համարում է ազատության բարձրագույն արտահայտությունը, իսկ քաղաքական ազատության անկյունաքարը՝ անհատի իրավունքը:

Ժամանակակից փիլիսոփայական, հասարակագիտական-քաղաքագիտական գրականության մեջ ընդունված է այն տեսակետը, համաձայն որի ազատությունից բխող անհատական իրավունքի գաղափարը, որից էլ բխում է ազգային պետություն կազմելու ժողովուրդների իրավունքների հիմնադրույթը, ձևավորվել է ռեֆորմատորական գաղափարախոսության և լուսավորչական փիլիսոփայության մեջ և գերիշխող է դարձել 19-րդ դարի ողջ ընթացքում եվրոպական պատմափիլիսոփայության և հասարակական-ազգային պրակտիկայի մեջ: Հավանական է ենթադրել, որ տվյալ գաղափարը Մտ. Նազարյանը փոխ է առել եվրոպական տեսական-փիլիսոփայական մտքի շտեմարանից, առավել և ս, որ նա ստացել է եվրոպական կրթություն և պրոպագանդել եվրոպական գիտությունն ու մշակույթը՝ որպես հայ ազգի լուսավորության կարևորագույն միջոցներ: Նրա մտորումների հիմքը, սակայն, կազմում են այն գաղափարները, որոնք դարերի ընթացքում ձևավորվել են հայ հոգևոր մշակույթի և հատկապես տեսական մտքի մեջ:

Մտ. Նազարյանն ինքը հանդես է գալիս Մկրտիչ Էմինի այն գաղափարի դեմ, ըստ որի Հայկի անհնազանդությունը Բելին հայ ազգի արմատական սխալներից մեկն է¹²: Ազատությունը հայ ազգի «արմանական հոգին» համարելով՝ Մտ. Նազարյանն այն կարծիքն է հայտնում, որ Բելն իրավունք չուներ «տիրապետել Հայաստանին», եթե անգամ «իւր անձը ավելի ուժեղ էր կարծում»¹³: Տվյալ օրինակը հետևյալ օրինաչափությունն է հաստատում՝ փոխառությունը հնարավոր է դառնում այն ժամանակ միայն, երբ գոյություն ունի սեփական հոգևոր կյանքի համապատասխան մակարդակ. ուստի և փոխ են առնվում այնպիսի գաղափարներ, որոնք մոտ են փոխառուի փորձին և տեղավորվում են նրա պատմամշակութային ավանդույթների շրջանակներում¹⁴:

¹¹ Տե՛ս Մտ. Նազարյան, Հայերի կոչումը մարդկութեան մեջ, էջ 6:

¹² Տե՛ս *Մկրտիչ Էմին*, Վեպք Հնոյն Հայաստանի քննութիւն, Մոսկվա, 1850, էջ 14:

¹³ Մտ. Նազարյան, Հայկական լեզուի խորհուրդը, «Հյուսիսարևայ», 1858, քիվ 1, էջ 7:

¹⁴ Տե՛ս *Ռիսա Միրումյան*, Ազգային փիլիսոփայությունը և փոխառության խնդիրը. - Հայ իմաստասիրությունը հոգևոր մշակույթի համակարգում: Պրակ 3, Ե., 1998, էջ 94:

19-րդ դարի հայ տեսական-փիլիսոփայական մտքի կողմից ազատության գաղափարը փոխառնելու մասին ասացես է գրում Հ. Գևորգյանը. «Հայերի կողմից որդեգրած՝ ազատության գաղափարը մի մեկուսի քաղաքական գաղափար չէր, այլ մի մաս էր եվրոպական լուսավորական, կրթական, պատմամշակութային, իրավական մի ամբողջ գաղափարախոսության և համապատասխանում էր հայոց պատմության և մշակույթի դարավոր ավանդույթներին և հայ կյանքում ամբողջ 19-րդ և 20-րդ դարերի սկզբին կատարվող հասարակական-տնտեսական փոփոխություններին, որոնցով այն ավելի և ավելի էր առանձնանում Օսմանյան կայսրության և Թուրքիայի՝ սախական այդ երկրի, ընդհանուր նկարագրի մեջ»¹⁵: Այս ընդհանուր կարգի գնահատականը լրացման և ճշգրտման կարիք է գգում: Ուշագրավ է այն փաստը, որ եվրոպական գիտության սահմաններում ազատության գաղափարի վերաբերյալ երկու դիրքորոշումներ են ձևակերպվել. ա) ազատության հիմքն անհատի իրավունքի մեջ է, բ) ազատության հիմքը տեղային ինքնավարության մեջ է: Ազատության գաղափարի երկու մեկնաբանումներն էլ շրջանառության մեջ էին գտնվում. առաջինը՝ գլխավորապես Արևելյան Հայաստանում, երկրորդը՝ մեծ մասամբ Արևմտյան Հայաստանում: Ինչպես արդեն նշվել է, Ստ. Նազարյանն ընդունում է ազատության գաղափարի առաջին մեկնաբանումը: Արևմտահայ մտածողների կողմից (Ն. Ռուսինյան) ազգի ազատության երաշխիքը դիտվում էր որպես տեղային ինքնավարության սկզբունքի իրագործման հետևանք: Արևմտյան Հայաստանում ծափալիված Սահմանադրական շարժման գաղափարախոսության և 1863 թվականին ընդունված Ազգային Սահմանադրության հիմքում ընկած էր տեղային ինքնավարության գաղափարը:

Մեկ գաղափարի նկատմամբ հայ մտածողների կողմից դրսևորած երկու տարբեր դիրքորոշումների առկայությունը բացատրվում է նրանով, որ նրանք ելնում էին ազգային-հասարակական կյանքի կոնկրետ պայմաններից, որոնք տարբեր էին Հայաստանի Արևելյան և Արևմտյան հատվածներում: Հենց այդ համատեքստում է նպատակահարմար ընկալել Ստ. Նազարյանի խոսքերը Ռուսաստանում ապրող հայերի դրության մասին. «Ճշմարիտ է, հայոց այժմեան դրությունը Ռուսաստանի օրենքի հովանաւորութեան տակ այնքան լաւ է, որ ոչինչ համեմատութիւն չկայ մի եվրոպական քրիստոնեայ տէրութեան և մի բռնակալ Ասիայի մահմեդական խառնաշփոթ կառավարութեան մեջ. Հայը Ռուսաստանում վայելում է քաղաքացու իրաւունք. ոչինչ բռնութիւն չէ հասանում ոչ նորա անձին, ոչ նորա ընտանիքին և ոչ նորա վատակին. ամենը նա կարող է ունենալ և վայելել օրենքի պաշտպանութեան տակ, լքուցանելով միայն իւր պարտքը իբրև քաղաքացի մի տերութեան...»¹⁶:

Պետության տևականության պայմանը, այսպիսով, Ստ. Նազարյանը տեսնում է ազգային կապի մեջ. ինչպես որ մարդկայնությունը իրականացվում է իրավունքի իմաստի համեմատ: Եթե պետությունն ազգային կապ է, եթե նրա սահմանների մեջ ապրում է կամ ավելի ճիշտ կլինի ասել՝ պետք է ապրի մի ամբողջ ազգ, ապա պետությունն է միայն այդ ազգի տեղական սահմանափակության շարժառիթը և նրա հայեցական սկիզբը, որը հաստատվում է լեզվի, ավանդույթների և ազգային պահանջումների մեջ: Դրանից բխում է, որ պետության (ազգային պետության) խնդիրը ժողովրդի ինքնության հաստատումն ու պահպանումն է, որի իրականացման միջոցը մարդու ազատության իրավունքն է:

Եզրակացություն տալու նպատակով նշեմ, որ «ազգ-պետություն» հարաբերության խնդրի նազարյանական քննարկման ելակետային գաղափարը «մարդ-անհատը պատմամշակութային համատեքստում» բանաձևն է: Մարդու բուն էության դրսևորումը, այսինքն՝ նրա հոգևոր զարգացումն իրականանում է մարդկանց համակեցության մեջ, որի լավագույն ձևը ազգային (պետական) միավորումն է: Մարդ-անհատի (ազգային համակեցության մեջ) և ազգ-անհատի (համամարդկային համակեցության մեջ) ազատ կենսագործունեության մեջ է, ըստ էության, Ստ. Նազարյանը տեսնում պատմության վսեմ խորհուրդը՝ բարոյական օրենքի մարմնավորումը:

Р. А. МИРУМЯН. - Соотношение “нация - государство” в философии истории Степаноса Назаряна. - В основе философско-исторической концепции Степаноса Назаряна лежит теоретический анализ изменяющихся во времени форм человеческого общежития, высшей формой которого является соотносимая с образованием нации государственная жизнь. Нация и государство представляются в качестве двух срезов единой системы - нация-государство. Нация - основанный на этнической и территориальной

¹⁵ Հ. Գևորգյան, Ազգ, ազգային պետություն, ազգային մշակույթ, Ե., 1997, էջ 14:

общности союз людей, а государство - всеобщая нравственная и политико-юридическая форма регулирования этой общности. Потому идея о вечности государства однозначно воспринимается как утверждение вечности национального образования. Основой формирования системы "нация-государство" считаются духовные факторы и, прежде всего, язык и культура.

Идея вечности государства - возможность, осуществление которой зависит от определенных условий. Эти условия автором статьи выводятся на основе анализа содержания, вкладываемого Ст. Назаряном в понятия "человечность", "патриотизм", "космополитизм", "национальность". Одновременно автору удалось выявить следующее: исходным принципом по исследуемому вопросу для Ст. Назаряна является формула "человек-личность в культурно-историческом контексте". Проявление истинно человеческой сущности, т. е. развитие его (человека) духовности, осуществляется в человеческом сообществе, самой лучшей формой которого является национальное (государственное) объединение. Свободная жизнедеятельность человека-личности (в национальном сообществе) и нации-личности (в общечеловеческом сообществе) и есть, по Ст. Назаряну, великий смысл истории, а именно - осуществление нравственного закона.

¹⁶ Ստ. Նազարյան, Առաջարկություն..., էջ 46: